ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային, կենցաղային, տնտեսական ապրանքների, ՀՀ զինանշանների և դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «16» դեկտեմբերի 2025թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. **Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.**

1.1. Հպարտ Քաղաքացի ՍՊԸ-ի, «Կոմուս» ՍՊԸ-ի, ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, ԱՆՆԱ ՄԱՆԴԵԼ ԱՐՈՆԻ ԱՁ-ի, «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի, ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ի, Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

1.2. Կարեն Պողոսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) է 29-րդ չափաբաժինի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Կարեն Պողոսյան Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացվել է Հավելված N 1.3 (իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր), որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի ե) պարբերության պահանջների համաձայն, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. Հպարտ Քաղաքացի ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 1-ին չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

2.2. «Կոմուս» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 32-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում են բավարար:

2.3. ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ) և գնահատվում է բավարար,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- 22-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

2.4. ԱՆՆԱ ՄԱՆԴԵԼ ԱՐՈՆԻ ԱՁ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ) և գնահատվում է բավարար,

- 28-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

2.5. Ա/Ձ Կարեն Պողոսյան

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես.

- դիմում հայտարարությունում բացակայում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը Համակարգի միջոցով ներկայացվելու վերաբերյալ տեղեկատվությունը,
- դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթուղթը հաստատվում է լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր):

- 29-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2.6. «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) հաստատված է լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու

մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրով «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի տնօրենը լիազորել է հիշյալ անձին «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի անունից մասնակցել պետական և այլ իրավասու կազմակերպությունների կողմից հայտարարված գնման գործընթացներին, ստորագրել (նաև էլեկտրոնային) և ներկայացնել վերջիններից բխող հայտեր, այն դեպքում, երբ հայտը ներկայացվել է Դատական դեպարտամենտի կողմից հայտարարված գնման ընթացակարգին,

- 30-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2.7. ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- 33-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

2.8. Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- 35-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2025թ. դեկտեմբերի 18-ին, ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետի պահանջներով՝

Կարեն Պողոսյան Ա/Ձ-ի և «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **դեկտեմբերի 17-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան